



**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

27 օգոստոսի 2019 թ.

N 694-Ն

ք. Ստեփանակերտ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՓԱԿՎԱԾ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Ո Ւ Մ է.**

1. Սահմանել ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԻՇ

[Handwritten signature]

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ



Քառասնամյա

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության 2019 թվականի
օգոստոսի 27-ի N 694-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՓԱԿՎԱԾ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման մեթոդաբանության և գույքագրման ամփոփ տեղեկատվական թերթիկի ձևի հետ կապված հարաբերությունները:
2. Գույքագրման ընթացքում ստացված տեղեկատվությունը հիմք է հանդիսանալու ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների տարածքում շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի որոշման, շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման և աղտոտվածության նվազեցման, չեզոքացման կամ վերացման միջոցառումների մշակման համար:
3. Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրումը ներառում է հետևյալ գործողությունները՝
 - 1) փակված օբյեկտի նույնականացում.
 - 2) գույքագրման ամփոփ տեղեկատվական թերթիկի պատրաստում.
 - 3) օբյեկտի դասակարգում՝ ըստ վտանգավորության դասի:
4. Գույքագրումն իրականացվում է երկու փուլով՝
 - 1) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների մասին նախագծերի, հաշվետվությունների, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի, օգտակար հանածոների վերամշակման փորձարարական տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ տեղեկատվական նյութերի ուսումնասիրություն.
 - 2) դաշտային ուսումնասիրություններ:
5. Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում կատարվում է ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների և հարակից տարածքների ուսումնասիրություն՝ տեղազննման, նմուշառման, նմուշների քիմիական վերլուծության եղանակներով: Դաշտային ուսումնասիրությունների արդյունքում պետք է ապահովվի հետևյալ հարցերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվությունը՝
 - 1) օբյեկտի տիպ (պոչամբարներ, խարամակուտակիչներ, շլամակուտակիչներ և այլն).
 - 2) օբյեկտի զբաղեցրած մակերես.
 - 3) օբյեկտում կուտակված ընդերքօգտագործման թափոնների ծավալ.
 - 4) օբյեկտում կուտակված թափոնների ագրեգատային վիճակ.
 - 5) օբյեկտում կուտակված թափոնների քիմիական բաղադրություն.
 - 6) օբյեկտի վտանգավորության դասի որոշում.

7) օբյեկտի վնասակար ազդեցության գոտու սահմանների որոշում.

8) շրջակա միջավայրի աղտոտվածության բնույթի ուսումնասիրություն:


6. Դաշտային ուսումնասիրությունների արդյունքներով կազմվում է ընդերքօգտագործման թափոնների տեղադրման օբյեկտի վերաբերյալ ամփոփ տեղեկատվական թերթիկը՝ համաձայն ձևի:

7. Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների վտանգավորության դասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր վնասակար ազդեցության, ինչպես նաև օբյեկտում կուտակված ընդերքօգտագործման թափոնների բաղադրության, բնակավայրերից օբյեկտի հեռավորության և տեղադիրքի հիման վրա:

8. Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների վտանգավորության դասը կանխորոշում է դրանցում կատարվելիք միջոցառումների (օգտահանման, վերամշակման, կոնսերվացման և այլն) առաջնահերթությունները:

9. Գույքագրման աշխատանքներն իրականացվում են շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՈԱԶԻՆ ՏԵՂԱԿԱԼ

 Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՓԱԿՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

№ ը/կ	Անվանումը	Բնութագիրը
1.	Գտնվելու վայրը	Նշվում է օբյեկտի տեղադիրքը՝ շրջան, համայնք
2.	Օբյեկտի տեսակը	Պոչամբար, խարամակուտակիչ, շլամակուտակիչ, ստորգետնյա փորվածք, լցակույտ և այլն
3.	Օբյեկտի տարողությունը, մ ³	Նշվում է օբյեկտում փաստացի կուտակված ընդերքօգտագործման թափոնների մոտավոր ծավալը
4.	Օբյեկտում կուտակված թափոնների ագրեգատային վիճակը	Պինդ, հեղուկ, մածուկանման, կախույթ և այլն
5.	Օբյեկտում կուտակված թափոնների քիմիական բաղադրությունը	Ներկայացվում է տեղեկատվություն թափոնների քիմիական բաղադրության վերաբերյալ
6.	Օբյեկտի մակերեսը, մ ²	Նշվում է օբյեկտի գրաված տարածքի մակերեսը
7.	Օբյեկտի հեռավորությունը բնակավայրից, մ	Նշվում է հեռավորությունը մինչև մոտակա բնակելի տարածքները
8.	Օբյեկտի տեղադիրքը	Ներկայացվում է տեղեկատվություն քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքում թափոնների տեղադրման փակված օբյեկտի գտնվելու վերաբերյալ
9.	Օբյեկտի վտանգավորության դասը	Ներկայացվում է ըստ շրջակա միջավայրի վրա օբյեկտի հնարավոր վնասակար ազդեցության
10.	Տեղեկատվություն օբյեկտի սեփականատիրոջ վերաբերյալ	Իրավաբանական անձի անվանումը (եթե այդպիսինն առկա է)